ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

«ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.72

Ամփոփում

Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյան»-ի առաջին հետևորդները՝ Գրիգոր Մարաշեցին, Գրիգոր Տղան, Ներսես Շնորհալին, հանդես եկան Կիլիկյան թագավորության և մշակույթի վերելքի պայմաններում: Մեծ նախորդի նման պահպանելով աղոթքի կանոնական եռաշերտ կառուցվածքը՝ կատարյալ Աստված-մեղավոր և դժվարին վիճակում գտնվող մարդ-փրկության աղերսանք, հույս և գոհաբանություն, նրանք Աստվածաշնչյան խոսքի որոշակի գերակայության մեջ յուրացնում են նաև բանաստեղծական մտածողության ինքնատիպությունը, իսկ Ներսես Շնորհալին դա ներառում է չափածո-հանգավոր կառուցվածքի մեջ: Գրիգոր Մարաշեցին մարդկային մեղքերը համադրում է իրական կյանքի, անգամ կենցաղի պատկերներին, փրկության ելքը տեսնում հոգևորին նվիրվելու մեջ: Գրիգոր Տղայի ուսումնառությունը հանգում է մարդկային էության խոհաքնարական դիտումների, փրկության ելքը՝ հայրենի խոսքին-բանականությանը: Ներսես Շնորհալին Աստծո կատարելության ներբողներին համադրում է մարդկային երկվությունների, հասարակական կապերի դրամատիկ արտահայտչաձևերը, որտեղ փրկության ելքը մտքի կուրությունը բանական լույսի ջահով վառելու պահանջն է: Նարեկացին փրկությունը արարման հետ էր կապում՝ վստահ «մատյանի հարակայությամբ» անմահ

Եթե Գրիգոր Նարեկացին փրկության հավաստիությունը կայուն դարձնելու համար պոեմի կառուցվածքի ամբողջ ընթացքում Կատարյալին մոտենալու հոգեբանական խորքային շերտեր է ներառում, իսկ Գրիգոր Մարաշեցին և Ներսես Շնորհալին առավելապես պահպանում են կրոնականոնական պահանջը՝ գեղարվեստական տարբեր որակներով, ապա Գրիգոր Տղան Աստծուն մոտ լինելու, փրկության հույսի և ցանկության մեջ ավելի կտրուկ է: Այս նրբերանգը նաև ժամանակային առաջընթացի մեջ վերածննդյան ազատության մասին ենթատեքստ է բերում, քանի որ Նարեկի առաջին հետևորդը Մարաշեցին է, այնուհետև՝ Շնորհալին և հետո՝ Գրիգոր Տղան:

Բանալի բառեր և արտահայտություններ. հետևորդներ, եռաշերտ կառուցվածք, ուսումնառություն, ներանձնական ապրումներ, մեղավոր

մարդ, փրկության ելք, արտաքին իրականություն, հոգեբանական անցումներ:

Ներածություն

12-րդ դարի կիլիկյան գրականության մեջ ձևավորվեց Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյան»-ի հետևորդների դպրոցը: Միջնադարյան աշխարհայեցողությունը և մշակույթի ազատության նկատելի տարրերը յուրովի համադրվեցին՝ ընկալելու տարժամանակյա հանճարեղ ստեղծագործության կանոնական ու գեղարվեստական առանձնահատկությունները: Գրիգոր Մարաշեցին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան ընկալում էին Նարեկի առավելապես աղոթքային բնույթը, բայց տեսնում էին նաև մարդկային ապրումների ծավալումները, կարևոր քայլ անում դրանք իրական կյանքի հարաբերությունների մեջ դիտարկելու առումով: Բնական է, որ կիլիկյան գրականությունը լեզվի և բովանդակության առումով այս կերպ յուրօրինակ անցում է ապահովում դեպի աշխարհիկ քնարերգության սկզբնավորումը հաջորդ՝ 13-րդ դարում: Հետաքրքիր է, որ ժողովրդական բանահյուսության մեջ Նարեկացու հրաշագործությունների հետ կապված պատումները ևս այս կամ այն չափով կապվում են Կիլիկիայի հետ: 15-րդ դարի բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու վիպական տաղերում Նարեկացու հրաշագործ ուժի հաստատումներ բերող դրվագներից հետո շեշտվում է.

Համբավն այլ ի Սիս հասաւ
Սքանչելիք սուրբ վարդապետին (2):

Մեթոդաբանությունը

Քննվելիք նյութի հնարավոր ամբողջացումը կատարվել է պատմահամեմատական մեթոդով՝ ներառելով նաև կառուցվածքային, միջնադարականության աշխարհայացքային քննության սկզբունքներ:

Քննարկում

12-րդ դարի կիլիկյան գրականության ինքնատիպ դեմքերից մեկի՝ **Գրիգոր Մարաշեցու** «Վայ գրոց ասացեալ ճառը» կամ պարզապես «Վայգիրքը» Նարեկի մարդկային ապրումների տիեզերական ընդգրկումները փոխարկում է տառապանքի ու «վայ»-երի հաճախ առօրյական որակների, դատողություններ անում մարդու տեսակի, կյանքի և մահվան, փրկության ձգտումների մեջ Աստծուն ապավինելու մասին: Աստծո կատարելության կանոնական ներբողը կրում է Նարեկի ոճական ուղղակի ազդեցությունը. «*Անհամեմատ գութ, անչափական սէր, բազմաղեղ ողորմութիւն, հրաման աննահանջելի, փրկարար համբոյր…*» (3): Զուգահեռենք Նարեկի բանաստեղծական պատկերը.

Անապական անձրեւ, արփիացնցուղ ցօղ…
Անհամառօտ յոյս, երկար տեսողութիւն,

Անզղջական տուր, ամենաբաշխ աջ,
Արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն… (5)

Բնականաբար ազդեցությունների ոլորտում բանաստեղծի անհատականության հնարավորություններ են բացում մարդկային տառապանքի, ապրումների պատկերները: Նախապես պարզորոշ ձևակերպում անելով, թե՝ «*Ահա որդեակք իմ իմացեք, զի Աստուած ոչ դժոխք ունի եւ ոչ արքայութիւն, այլ ամենայն մարդ ինքն շինէ դժոխք եւ արքայութիւն*»՝ (3) Մարաշեցին կյանքի և մահվան պատկերներով ներկայացնում է մարդկային իրական հարաբերությունների շատ կողմեր:

Աստծո կատարելության և մահվան արդարադատության հետ կենցաղային խնդիրների համադրումով «մեղա»-ների մեջ անգամ սոցիալական ու քաղաքական երևույթների հաստատումներ են բերվում. թողություն է խնդրում արծաթը վարձով տալու և «տոկոսօք պահանջելու» , «կաշառառութեան» (3), ընկերոջ սահմանները կամ հայրենիքը հափշտակելու, քրիստոնյաների կամ այլազգիների մեջ «գայթակղութիւն դնելու» համար. «*Մեղա՜ փարթամանալով հակառակ աղքատին*» (3), խոսում նաև տարբեր վայելքներից հեռու մնալու մասին, անգամ նշում՝ «*Մեղա՜ երազամոլ յանկողինս, և սիրել, և նիրհել*» (3): Ճիշտ է նկատվել, որ «մեղա»-ների մեջ բավականին «արժեքավորը այն տեղեկություններն են, որոնք վերաբերում են ժողովրդի մեջ տեղ գտած սովորություններին ու բարքերին»: Հոգեկանի և մարմնականի պայքարի և դրա հետևանքով ստեղծված հոգեվիճակների պատկերների մեջ բանաստեղծը «բնականորեն և մարդկային գծերով է նկարագրում մարդու ներքին աշխարհը» (4): Նարեկում «մեղա»-ները շատ ավելի խոհական ընդհանրացումներ են. «*Մեղա՜ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ, //Մեղա՜ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ, //Մեղա՜ գերունակ գոգոյդ գրգանաց, անբաւս մեղայ, //Մեղա՜ ճաշակման անճառդ կենաց, բազումս մեղայ*» (5):

Ներաշխարհը ցուցադրելու դիպուկ հնարավորություն է դառնում կյանքի և մահվան հակադրությունը, որը հաստատում է նաև բանաստեղծի կենսասիրությունը, քանի որ մահը ոչ միայն արդարադատ է, այլ նաև՝ ողբերգական: Հռետորական հարցման ձևով շեշտելով, թե մահից հետո՝

Ո՞ւր է անդ թագաւորացն աչառանօք մեծութիւն.
Ո՞ւր է երիտասարդացն փառաւորութիւն…
Ո՞ւր են որ թմկօք և պարիւք զգինին ըմբէին
Եւ զամենայն տնանկն արհամարհէին… (3)

նա «ոչ կայ» կրկնությամբ մերժում է մարմնական պահանջների սին դրսևորումները, հիշեցնում, որ ամեն ինչ «փշրուած ոսկորք ու փոշի» է դառնում, և «…*այս մոխիրս այն մարմինքն են, //Որ զիրկս արկանէիք, անյագ համբուրէիք*» (3):

Բնական է, որ բոլոր մեղքերի ակունքը համարվում են զգայարանները՝ «*Մեղա՞յ տեսակօք զգայութեան՝ որ այսոքիկ*» ՝«*տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, շոշափելիք*» (3): Զգացմունքների խտացումը «մեղա»-ներից անցնում է «վայ»-երին. «*Վայ քեզ, միտք իմ, զի ոչ դադարեցեր ի սատանայական զանձուցն յշտեմարան սրտիդ ամբարել*», կամ՝ «*Վայ ձեզ, լսելիք իմ, զի լուայք զձայն լկտի երգոց դիւական եւ ընդունեցայք զբանս խաբեութեան եւ ստութեան*» (3): Նարեկացին, մեղքերի ակունք զգայարանները «ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք» համարելով, կանոնականից դուրս ելնող բանաստեղծական պատկերավորությամբ է մերժում դրանք. «*Միրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, //Ակնս յայրատատես, ականջս վրիպալուր…*» (5), ինչը նրա առաջին հետևորդներից մեկը իր «Վայգրքի» ամբողջ կառուցվածքում մեծ մասամբ անում է՝ ուղղակի արձագանքներով մարդկային կենցաղի շերտեր մտնելով:

Բոլոր դեպքերում, Վերածննդի հեղինակների ուշադրության կենտրոնում մարդն է՝ որպես նոր արժեք, որ պիտի ցուցադրվի նաև կրոնականոնական խոսքի համադրությամբ: Մարաշեցին մահվան և մարդկային կենցաղորեն իրական կապերի մեջ է կերպավորում մարդուն: Մեռնողի հրաժեշտի խոսքերի («*Քանզի ճանապարհ հեռի երթամ, //Ուր այլ ոչ գնացի. //Եւ յերկիր օտար, ուր ոչ ճանաչեն զիս. //Յաշխարհ ահեղ, ուստի ոչ ոք դարձաւ…* (3), այս հիմքի վրա՝ մեղավորության ընկալման, մյուսներին ապաշխարանքի դաս տալու ընթացքը հասնում է նաև մարդու գնահատմանը՝ կանոնական շեշտերով.

Եւ արդ, զի՞նչ իցէ մարդ .- ոչինչ:
Զի՞նչ իցէ մարդ .- ստուերք:
… Զի՞նչ իցէ մարդ .- երազ անկայուն:
Ահա վերացաւ, ահա անտես եղաւ… (3)

Նարեկացու լեզվամտածողության երանգներ զգացվում են մարդու էության պատկերավոր ընկալման փորձի մեջ: Ի վերջո, ի՞նչ է մարդկային կյանքը. «*Անհաստատուն ծով օդադիր, //Երազ անվստահելի, //Հոսանք սահեալք, ծուխ վերացեալ, //Ալիս կուտակաց խռովեալ…*» (3): Հիշենք Նարեկի ծովածավալ պատկերներից մեկ-երկու օրինակ. մարդը, որ նման է միայն ողբերից հյուսված մատյանի, տարագիր անձի, «հեղգացեալ» մշակի, փոթորկի մեջ կործանվող նավի և այլն, և այլն, տարժամանակյա ընդհանրացում է դառնում իր երկվությամբ.

…Դիմօք ժպտեալ եւ մտօք խոցեալ,
Կերպ՝ի ծաղր, եւ աչք՝ի յողբումն.
… Դէմք կրկնակի կերպից.
Մինն՝տխրեալ, եւ միւսն՝ցասուցեալ,

Կշտամբանք ընդ միոյ երկու,
Մինն՝ աստեացս, եւ միւսն՝ ապառնեացն,
Ապաւինութիւն կարծողականք,
Մինն՝ զոնե, եւ միւսն՝ թերեւս… (5)

Աստծո կատարելության և մարդու անճարակ մեղավորության հակադրությունը և՛ աղոթքի ժանրային պահանջով, և՛ Նարեկի որոշակիացված ամփոփումով պետք է ավարտվեն փրկության աղերսանքի և հույսի ներառումով: Նարեկացին արարման կարողության մեջ է տեսնում անմահությունը, Շնորհալին՝ աստվածային բանականությանը մոտենալու ձգտումի մեջ: Գ. Մարաշեցին, որ «Վայգրքում» շեշտադրում էր ողբային վիճակները՝ «վայերի» ու «մեղաների» կուտակումներով, կարծես բնականորեն ընդունում է փրկության անհնարինությունը և, հետևաբար, առանց Աստծուն հղած որևէ աղերսանքի, պարզապես հիշեցնում է հոգևորին հետևելու պահանջը. «…*Զինչ այլ ինչ, քան միայն հոգւոյ պարապել*» (3):

Նարեկի առաջին հետևորդներից Գրիգոր Մարաշեցու պոեմի մեջ իրական-մարդկային կապերի գնահատումների, դրանց անգամ կենցաղային շերտերի մատչելի ներկայացումից հետո կիլիկյան «դպրոցի» մյուս ներկայացուցչի՝ **Գրիգոր Տղայի** համար «Ողբերգության մատյանը» շատ ավելի մարդկային ապրումների խոհաքնարական ընկալումների ակունք է: Եղել է կենսասեր, այսաշխարհային վայելքներից իրեն հեռու չպահող («Եւ էր տէր Գրիգորիս այր սկայաձեւ, զուարթերես եւ առատասիրտ, հանճարեղ եւ իմաստուն ի խօսս…Եւ զկեանս իւր արքայակերպ վարէր, մեծամեծ տրիւք եւ առատ պարգեւօք եւ բազմախորտիկ սեղանով») (7), ուստի ապրել է նաև ինչ-որ շրջանակների, անգամ Լևոն Բ թագավորի կողմից բացասական վերաբերմունքի միջավայրում: Վերածննդյան ազատության որոշակի կրողը լինելով՝ նա իր հորեղբայր Շնորհալու նման ոչ միայն ազգային-եկեղեցական կյանքի, այլև գիտության ու մշակույթի կազմակերպիչ էր: Նրա հորդորով և պատվերով են ստեղծվել Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւնը», Սամուել Անեցու «Հաւաքմունք ի գրոց պատմագրացը», նա հովանավորել է Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»:

Ինքնատիպ ասելիք են բերում կրոնախոհական բանաստեղծությունները, որոնց մեջ կարելի է առանձնացնել խոսուն վերնագրով երկուսը: «Բացարձակումն մտաց» բանաստեղծության մեջ միտքը համարելով մարդկային ճշմարիտ գոյության դրսևորման ձևը՝ նկատում է, որ ինչպես ամեն մի կառույցի հիմքն է մնում անտեսանելի, այնպես էլ միտքը-բանականությունը, որի դերը նկատելի կլինի

ճարտարապետական ինքնատիպությամբ բարձրացող պատերի մեջ: Մտքի արտահայտման միջոցը լեզուն է. և հաջորդում է խոհ-խրատը.

Մի առաւելովքն ցնդիլ,
Այլ կարճաբանութեամբն հպիլ.
Եւ ընտրել զօգտակարսն
Եւ մայր լինել խոհեմութեան: (8)

«Սրտի բեկելոյ…» բանաստեղծության մեջ մարդկային բանական գոյության մյուս որոշիչը՝ զգայություն-զգացմունքները, օգնում են ամբողջացնելու մարդու տեսակն ու էությունը, և այստեղ բնականորեն պիտի զգացվի Նարեկի շունչը.

Աչք՝ խոնարհ եւ սիրտ՝ բարձր,
Գլուխ՝ կոր, եւ հոգի՝ պարզ,
Միշտ եւ հանապազ թախիծ սրտի արտաքս ելեալ.
Յուրախութեան եղեալ ժամանակի՝
Յանկարծակի արտասուք զծնօտիւն հարեալ՝
Շուրջանակաւ բացն՝ որպէս վարդ փթթեալ տեսակ (8):

Զգացմունքի և բանականության հարաբերությունը մշակութային տարբեր դարաշրջանների կողմից յուրովի է բացատրվել. Միջնադարի համար բանականության խորհուրդը Աստծո մեջ է, Վերածնունդը ընդունեց բացարձակի այդ խորհուրդը, բայց չէր կարող շրջանցել մտքի և զգացմունքի միջև եղած նաև կոնֆլիկտի փաստը: Տեսական գրականության մեջ նկատվել է. «Մարդը գիտակցում է իր ներքին փորձը ոչ թե բանականության կարգերի մեջ, այլ գերզգայական կամ զգացմունքային կատեգորիաներում, այսինքն՝ միստիկայում», այնուհետև նոր միայն հաստատում է այն բանականության մեջ, որպես ռացիոնալիզմ. ուրեմն՝ «ոչ միայն ռացիոնալիզմ, այլ նաև միստիցիզմ. երկուսն էլ տարբեր ուղիներ են, որոնք ձգտում են նույն բանին՝ մարդկային գիտակցության ազատությանը դոգմայից» (9): Այս երկու երևույթների միջև առկա է նաև ներհակություն, և «զգացմունքների ու բանականության միջև եղած կոնֆլիկտը հաճախ դառնում է կոնֆլիկտ մարդկային անհատականության և նրա ճակատագրի միջև» (10): Վերածնունդյան մշակութային այս որակների դրսևորվելը կիլիկյան բանաստեղծների ժառանգության մեջ, իհարկե, հետևանք է նաև մեծն Նարեկացու անհաղթահարելի ազդեցության:

Այդ ազդեցությունը որոշակիանում է Գրիգոր Տղայի բանաստեղծությունների փոքրիկ մի շարքի մեջ, որը կրում է *ողբի* ժանրային հատկանիշներ,սակայն, ինչպես ճիշտ նկատել է այս բանաստեղծի կյանքի և ժառանգության ամբողջական հետազոտող Ասատուր Մնացականյանը, բովանդակային և պատկերային անցումներով կարելի է համարել պոեմ: Նարեկի եռաշերտ կառուցվածքին բնորոշ՝

Աստծո կատարելության և փրկության հույսի հատվածները «ենթարկվում» են հիմնական ասելիք դարձած երկրորդ շերտի՝ մեղսագործ ու տառապող մարդու ապրումների գեղարվեստական ինքնատիպությանը: Քնարական հերոսը երբեմն միտումնավոր բացարձակացնում է մեղավորության զգացումը («*Եւ լո՛ւր ողորմելոյս», «Եւ տո՛ւր համարձակութիւն ստամբակիս», (8). «Գարշեալ եմ արիւնազեղխութեամբ մեղաց իմոց*», (8), «*Բերանն իմ պոռնկեցաւ զանազան մեղօք*», (8), ինչը նրան կարծես ինքնաոչնչացման է մղում.

Եթէ շուն իցեմ՝ ոչ տաս ինձ կերակուր,
Վասն այսորիկ ոչ միսիթարես,
Զի եթէ շուն եմ, շուն եմ,
Բայց զկնի Տեառնդ աղաղակեմ: (8)

Այս խստությունը հոգեբանորեն ամբողջացնում է կերպարի դրամատիզմը, երբ հաջորդում են չիրականացված ձգտումների, չբացահայտված կարողությունների, նաև մարած երազների պատկերներ: Եվ այստեղ է, որ գեղարվեստը, թեկուզ կանոնական կառուցվածքի որոշ երանգներով, իր հիմնական նյութի ու ասելիքի՝ մարդկային էության շեշտադրմամբ, հարազատացնում է մեծ ուսուցչին և շնորհալի աշակերտին: Դա կրկին ընդգծվում է վեհ թռիչքների և հասարակայնորեն պարտադրված անկումների հակադրության ընկալումով.

Ազատ էի ի տանն հօր իմոյ
Եւ այժմ եղէ ծառայ բազմաց.
Ապտակէի երբեմն զչարսն
Եւ այժմ զզուիմ յանարժանից: (8)

Ներքին ու արտաքին կապերի այս դրաման հիմք է դառնում, որ փրկության կամ ազատության աղերսանքը ձևակերպվի այսպես (հիշենք բանաստեղծի կերպարը).

Դու, զոր ինչ եւ կամիս՝ արա՛,
Զոր ինչ եւ խորհիս՝ կատարեա՛,
Միայն ի գոռոզէն յափշտակեա՛,
Միայն ի նորայոցն ազատեա՛: (8)

Նարեկացու նման Գրիգոր Տղան ևս մեղավորության փաստն ու գիտակցությունը կապում է արտաքին աշխարհի հետ (Նարեկացի. «*Եթէ զինուոր տեսանեմ՝ մահու ակն ունիմ, //Եթէ պատգամաւոր՝ խստութեան, //…Եթէ բարեկրօն՝ յանդիմանութեան*», (5)՝ ներքին կուտակումները մեղմելով՝ փրկության հույսին հիմնավոր ապավինելու նպատակով.

Իշխան իմ, առ որ հայեցայ վասն վայրապատնութեան իմոյ,
Խեթիւ հայեցաւ յիս ի միջօրէին աւուր
Եւ եդ զիս պահապան խոզից իւրոց: (8)

Ուրեմն և՝ հասկանալի է ցավալի ընդհանրացումը՝ «*Հետեւեցի յերկիր, որոյ իշխանքն անիրաւ են, //Ընթացայ ի քաղաք, որոյ թագաւորն խաբեբայ է*» (8): Նարեկի տարժամանակյա ընդհանրացումներին որպես շարունակություն, նրա հետևորդները առաջադրում են կյանքի և իրականության ճշմարիտ պատկերումների խնդիրներ: Իսկ դրամատիկ ապրումների, ներքին ու արտաքին կապերի մեջ դրանց հիմնավորումների, այս ընթացքում կրոնականոնական ընկալումը արվեստի նյութ դարձնելու ստեղծագործական ուղին պիտի ավարտվի լավատեսական հաստատումով: Բնական է, որ այն առնչվի Կատարյալի հետ, որի նկատմամբ այս բանաստեղծի վերաբերմունքը կրոնաէթիկական հեռավորությունից մոտենում է մտերմության վիճակին. «*Կամիմ գալ առ քեզ, Յիսո՛ւս, //…Սէր աշխարհիս պաղատէ զիս*» (8), և անգամ՝ «*Պահանջեցից ի քէն ողորմութիւն՝ //Ի պահանջելն յինէն եկեալ բարեկամի*» (8): Իսկ բարեկամորեն մերձեցման կամ փրկչական կապի միջոցներից է «զնախնական բարբառ իմ», կամ որ նույնն է՝ բանականության կրող խոսքը, որին՝ որպես աստվածային բանականության կրողի, դիմում է նաև Շնորհալին:

Ներսես Շնորհալին է յուրովի ամբողջացնում Նարեկի կիլիկյան դպրոցի բնորոշ կողմերը, իր ուսումնառության աղբյուրի տարժամանակյա և համամարդկային ընդգրկումները, խոսքի-պատկերի մետաֆորային ընդհանրացումները հաճախ որոշակիացնում իրականության ուղղակի արտահայտչաձևերով, որոնց համադրվում է աղոթքային բնույթը: Այս առումով ինքնատիպ ընդգրկումներ են բերում ոչ միայն տաղերն ու գանձերը, շարականներն ու ներբողները, այլև առավելապես «Ողբերգության մատյանի» ուղղակի ազդեցությամբ գրված «Յիսուս Որդի» պոեմը:

Աստծո կատարելության ներբողային դրսևորումները, ինչպես տեսանք, ներառում են նաև պատկերավոր մտածողության ինքնատիպ դրսևորումնոր: Այդպիսի պատկերներում Նարեկացին անընդհատ Աստված-մարդ հարաբերության նորանոր կապեր է բերում, հոգեբանորեն մոտեցնում անընդհատ հեռացող սահմանները, մարդու փրկության պատասխանատվությունը «կիսում» Կատարյալի հետ, մանավանդ Նա ազատ է այն ամենից, ինչը հասարակայնորեն պարտադրված է մարդուն.

Ոչ փակեալ ես ընդ օրինօք,
…Ոչ չափեալ ես ընդ սահմանաւ,
Ոչ վրիպեալ ես բարկութենէ,
Ոչ սխալեալ ի խստութենէ… (5)

Բոլորի փրկությանը կոչված իր Մատյանի երկունքալից ճանապարհին բանաստեղծն անընդհատ Աստծուն մոտենալու ուղիներ է փնտրում, որպեսզի Նրա նմանողությամբ ստեղծված լինելու արժանիքի

հավաստիացումներ հաստատի իր մեջ: Չէ՞ որ Արարիչն է կարգել այնպես, որ՝

Քեզ արդարութիւն հանդերձեր, բարերար,
Եւ ինձ ամօթ եւ պատկառանս պատրաստեցեր.
Քեզ՝ փառս վայելչականս,
Եւ ինձ՝ նախատինս յարմարաւորս…
Քեզ՝ իրաւունա բազմարժանիս,
Եւ ինձ՝ պատասխանատուութիւնս ամենաւարանս… (5)

Այս և այլ հիմունքներով («*Արդեւք մոռասցե՞ս զբարերարելդ՝ ակնկալութիւն. //Անտեսցե՞ս զմարդասիրելդ՝ անփոփոխ. //…Ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն*», (5) հասկանալի է աղերսանք-պահանջի իրավունքը՝ «Պաղատիմ զմարդասիրութիւն», որը, իհարկե, պետք է հիմնավորվի մեղքերի և մեղավոր մարդու կերպարի տարժամանակյա ընդհանրացումներով: Մանուկ Աբեղյանը դիպուկ նկատել է, որ «Գրիգոր Նարեկացին բուռն սաստկությամբ նկարագրում է ավելի մեղքի զգացումը, մեղավոր մարդուն, քան մեղքը» (1):

Ներսես Շնորհալին ևս տառապող մարդու կանոնական ու բանաստեղծական պատկերներ է կուտակում.

Զեռն իմ ձգեալ յուղէշ ծառին,
Կթեալ պտուղ ինձ մահածին…
Բերանս առեալ զճաշակ մեղուին,
Բայց յորովայնս մաղձ դառին (6):

Իրեն համեմատում է Կայենի հետ, որը ոչ թե եղբորն է սպանում, այլ իր անձն է նենգում: Անընդհատ բարձրացրել է միայն մեղքերի աշտարակը, նմանվել «*բեկեալ նաւին տարաբերեալ միջածովին*», կամ աշնանային «*հողմահար խռիւ խոտին*» (6)

Գրիգոր Նարեկացին «Ողբերգության մատյանի» մեջ ներանձնային կուտակումները կապում է արտաքին աշխարհի հետ, բերում կյանքի, հասարակության դիպուկ բնորոշիչներ: Մարդկային երկվությունը դրսևորվում է նրանով, որ ծիծաղը դառնում է «*ինքնակամ լքում շնորհի*», երդումները՝ «*խաբողի հետ գործակցություն*» (5, Բան ԽԵ, ա). ներառվում են գյուղական կյանքի («*Ինչպես արորը առանց մաճկալի, //Հերկ չի կատարի հավասարապես*»), բնության («*Ինչպես ամպերը չեն չվում բնավ առանց հողմերի, //Արեգակն առանց օդի տարրերեն շրջապտույտը իր չի բոլորում*»), ճանապարհ գնացողի («*Չամբարեցի գեթ մի փոքր պաշար //Անհատնում ուղին դուրս գալուց առաջ, //Որ փարատեի տագնապը սովի*»), պատերազմ մեկնողի («*Ոչ աջ ձեռքիս մեջ զենքեր ունեցա //Եվ ոչ էլ ձախով վահան կրեցի, //Ոչ նժույգներիս զրահ հագցրի, //Ոչ մարտիկներիս՝*

զինավառություն, //Որ կարենայի ճակատ հարդարել». Բան ԿԸ, բ. թարգմանությունը Վազգեն Գևորգյանի) իրական պատկերներ:

Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմը, խոհաքնարական այսպիսի ընդգրկումների ու խորքի չհասնելով, պահպանում է կառուցվածքի և պատկերավորման նույն տրամաբանությունը, բերում իրական կյանքի նույնաբնույթ շերտեր. կյանքի ճշմարիտ ուղուց շեղված իր անձը նման չէ մաճկալին, որ վարի ժամանակ՝ մաճը բռնած, միշտ ուղիղ առաջն է նայում՝ չշեղելու համար ակոսի ուղղությունը: Կամ՝ նմանվել է նշանավոր մեծատուն հարուստի, որն իր բարեբեր արտում որոմ է ցանել և ոչ թե ազնիվ սերմեր (աստվածաշնչյան այլաբանությունը այս պատկերներում ունի իրական ենթատեքստ ևս): Նման չէ արծաթի կամ ոսկու, որ քուրայի հրով փորձարկվի.

Եւ ոչ եմ վէմ յեզր ծովին,
Որ ի յալեացն անշարժ պահիմ.
Եւ ոչ արմատ ծառոյ խորին,
Որ ի հողմոց ոչ տապալին: (6)

Գրիգոր Նարեկացին արարման՝ բարին ստեղծելու աստվածատուր ուժի հետ է կապում մարդու անմահության, ուրեմն և՝ Աստծուն-Կատարյալին մոտենալով՝ փրկության երևույթը. «*Եւ թէպէտ վախճան ընկալայց իբր զմահացու, //Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի //Գրեցայց կենդանի*» (5): Ահա թե ինչու նա անընդհատ խնդրում էր Տիրոջը՝ օգնել, որ ձեռակերտը հասցնի ավարտին, որ թեկուզ «փոքր այս աշխատանքից» անվաստակ չմնա, «Ինչպես զրաջան սերմնացան՝ ամուլ, անբերրի հողի» (Բան Բ, բ), չէ՞ որ այս Մատյանը բոլորի փրկությանն է կոչված՝ նոր ծնվածի, արբունքի հասածի, «անկար ծերությամբ» վախճանին սպասողի, մեղավորի ու արդարամիտի, նկունի ու խիզախի, հպատակի ու իշխանավորի:

Ներսես Շնորհալին մարմնական մաքրագործման հնարավորությունը կանոնական պահանջով տեսնում է բանական լույսի հետ շփման ուժի մեջ: Հետևաբար աղերսանքն ու փրկության հույսը կապում է փրկարար ձայնին լսելու շնորհի հետ.

Ինձ մի լիցի լսել ձայնին,
Զոչգիտական պատասխանին.
Այլ տուր վառեալ շիջեալ ջահին
Մտաց կուրիս լուսով քոյին: (6)

Այսինքն՝ փրկության ճանապարհն այն է, որ մարդը պետք է ձգտի մտքի կուրությունը վառել բանական լույսի ջահով, «*Որ փոխանակ բանականին // Անբան տարերքն սարսէին*» (6):

Եզրակացություններ

«Ողբերգության մատյան»-ի առաջին հետևորդ Գրիգոր Մարաշեցին մարդկային երկվությունների, կյանքի և մահվան հարաբերության, մեղքերից մաքրագործվելու խնդիրները կապում է նաև կենցաղի աշխարհիկ ընկալումների հետ: Գրիգոր Տղայի համար Նարեկը շատ ավելի մարդու մասին խոհական ընկալումների աղբյուր է, Կատարյալի հետ հարաբերությունը ընդգծում է դրամատիկ երկվությունը: Աստծուն մոտենալու և փրկության ելքը համարում է բանականության կրող խոսքը: «Ողբերգության մատյան»-ի առաջին հետևորդների ուսումնառությունն ու առաջընթացը ամբողջացնող Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմում Աստծո կատարելության կանոնական արտահայտությունները հաղթահարվում են մարդկային երկվությունների, հասարակական կապերի պատկերներով, որտեղ փրկության ելքը բանական լույսն է: Նարեկացին անմահությունը կապում էր «մատյանի հարակայության» հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. (1968), Երկեր, հատոր Գ, Երևան:
2. Թլկուրանցի Հ. (1960), Տաղեր, Երևան:
3. Մարաշեցի Գ., Վայգիրք, Մատենադարանի թիվ 108 ձեռագիր
4. Մելյան Հ. (1960), Գրիգոր Մարաշեցին և նրա ստեղծագործությունը, «Էջմիածին», Զ:
5. Նարեկացի Գ. (1985), Մատեան ողբերգութեան, Երևան:
6. Շնորհալի Ն. (1830), Բանք չափաւ, Վենետիկ:
7. Սմբատ Սպարապետ (1956), Տարեգիրք, Վենետիկ:
8. Գ. Տղա (1972), Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան:
9. Конрад Н. (1967), Об эпохи возрождения, Москва.
10. Лихачев Д. С. (1973), Развитие русской литературы 10-17 веков, Ленинград.

REFERENCES

1. Abeghyan, M. (1968), Erker /Erker/ (Vol. III), Yerevan.
2. Tlkurantsi, H. (1960), Tagger /Tagher/, Yerevan.
3. Marashetsi G., Vaygirq /“Lamentations”/, manuscript number 108, Matenadaran
4. Melyan H., (1960), Grigor Marashecin & nra steghc'agorc'owt'yowny' /“Grigor Marashetsi and his work”/, Echmiadzin, № 6.

5. Narekatsi, G. (1985), Matean oghbergowt'ean /“Book of Lamentations”/, Yerevan.
6. Shnorhali, N. (1830), Բանք չափաւ /“Banq Chapav”/, Venice.
7. Sparapet, S. (1956), Taregirq /Yearbook/, Venice.
8. Tgha G., (1972), Banasteghc'owt'yownner & poemner /“Poems”/, Yerevan.
9. Conrad, N. (1967), Ob epokhi vozrozhdeniya /On Renaissance era/, Moscow.
10. Likhachev, D. S. (1973), Razvitiye russkoy literatury 10-17 vekov /Development of Russian literature of the 10th-17th centuries/, Leningrad.

Вазген Сафарян

«Первые последователи поэмы Григора Нарекаци «Книга скорбных песнопений». Заключение

Ключевые слова и выражения: последователи, трехслойная структура, обучение, внутриличностные переживания, человек грешный, спасительный выход, внешняя действительность, психологические переходы.

Первые последователи поэмы Григора Нарекаци «Книга скорбных песнопений» появились в период Киликийского царства и культурного подъема. Сохранив, подобно великому предшественнику, каноническую трехслойную структуру молитвы – совершенный Бог-грешник и находящийся в трудном положении человек-мольба о спасении, надежда и хвала, они, в превосходстве Евангельского слова, осваивают своеобразие стихотворного мышления, а Нерсес Шнорали включает это в стихотворно-рифмовое построение. Григор Марашеци сопоставляет человеческие грехи с реальной жизнью, вплоть до бытовых сцен, и находит спасение только в посвящении себя духовному. Обучение Григора Тха сводится к поэтическому восприятию человеческой сущности, спасение – в родном слове-разумении. Нерсес Шнорали объединяет поучающие отличительные свойства «Книга скорбных песнопений», восхвалениям Божественного совершенства сопоставляются драматичные выражения о человеческой двойственности, общественных связей, где спасительным выходом является испепеление мыслительной слепоты светом разума. Нарекаци связывает спасение с творчеством, будучи уверенным в вечном бессмертии автора «Книги…».

Если Григор Нарекаци включает в структуру поэмы глубокие психологические пласты приближения к Совершенному с целью

стабилизации уверенности в спасении, а Григор Марашеци и Нерсес Шнорали преимущественно поддерживают религиозную потребность разными художественными качествами, то Григор Тга более радикален в надежде и желании быть ближе к Богу и ко спасению. Этот нюанс также привносит контекст свободы Возрождения в ходе времени, поскольку первым последователем Нарека является Марашеци, затем Шнорали, а затем Григор Тга.

Vazgen Safaryan

"The first followers of "Book of Lamentations" poem of Grigor Narekatsi". Conclusion

Key words and expressions:followers, three-level hierarchy structure, learning, intrapersonal experiences, sinful human, way of salvation, external reality, psychological transitions.

The first followers of "Book of Lamentations" poem of Grigor Narekatsi manifested under the conditions of the rise of the Kingdom of Cilicia and its culture. Like their great predecessor, preserving the canonical three-level hierarchy of prayer: perfect God-sinner and man in hardship-salvation plea, hope and thanksgiving. They also absorb the originality of poetic thinking in the supremacy of the Biblical writing, and Nerses Shnorhali includes it in the verse-rhyme structure. Grigor Marashetsi compares human sins to real life, even referring to the images of everyday life, and sees the path of salvation in its devotion to the spiritual life. Grigor Tgha's research leads to philosophical perceptions about human nature, the path of salvation to its native speech-rationality. Nerses Shnorhali completes the illuminatory features of "Book of Lamentations", combining dramatic outbursts of human duality and social relations with the reminder of the perfection of the God, where the path of salvation is the requirement to illuminate the blindness of the mind with a torch of rationality. Narekatsi associated salvation with creativity, confident in the fact of "the permanence of the book".

If Grigor Narekatsi includes deep psychological layers of approaching the Perfect throughout the structure of the poem in order to stabilize the certainty of salvation, and Grigor Marashetsi and Nerses Shnorhali mostly maintain the religious requirement with different artistic qualities, then Grigor Tgha is more drastic in his hope and desire to be close to God and for salvation. This nuance also brings a context about the freedom of Renaissance in the progression of time, as Narek's first follower is Marashetsi, then Shnorhali and then Grigor Tgha.

Վազգեն Սաֆարյան - բանասիրական գիտ. դոկտոր, ԵՊՀ հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարի մշակութաբանական առանձնահատկությունը, հայ գրականության զարգացման օրինաչափությունները սկզբնավորումից մինչև նորագույն շրջան և գրական մեծերի դերը առաջընթացի տրամաբանության մեջ: Հեղինակ է ինը գրքի (մենագրություններ, բուհական ձեռնարկներ) և շուրջ 100 հոդվածի:
vazgen.safaryan@gmail.com

Вазген Сафарян - профессор кафедры истории армянской литературы и теории литературы ЕГУ, доктор филологических наук. Научные интересы: культурологические отличительные свойства средневековья, закономерности развития армянской литературы от зарождения до новейших времен и роль литературных величин в логике прогресса. Является автором девяти книг (монографий, пособий для вузов) и около ста статей.
vazgen.safaryan@gmail.com

Vazgen Safaryan - Doctor of Sciences in Philology, Professor of YSU Chair of History of Armenian Literature and Literary Theory. Scientific interests include the cultural specificity of the Middle Ages, the development patterns of Armenian literature from its origination to the modern period, and the role of prominent literary actors in the light of progress. He is an author of nine books (monographs, university manuals) and around 100 articles.
vazgen.safaryan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 25.10.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 08.11.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024թ.